


Քունը 20րեքտուրի եւ ՇԱՐԱԹ օրերը կըրտարաւորի :  
Տարեկան բաժանորդագրին է միայն չորս արծաթ Բէնիտ կանխիկ վճարելի , թէ մայրաքաղաքիս եւ իւր արուարձանաց եւ թէ գաւառաց համար :  
Վեց 1 և երեք ամսաց համար ալ բաժանորդ կըրտարաւորի :  
Տեղական եւ գաւառական Թղթատարութեան ծախքը խմբագրութիւնը պիտի վճարէ :  
Հատը 20 փարայ է , եւ կգտնուի մասնաւորապէս Պահմէ-գարու Սուքի Պողոս ազայի խանութը :



Մանուգման տողը 5 դրու է մէկ անգամի համար : Աւելի աճան կըլլայ աւելի անգամ ներու համար :  
Խմբագրութեան վերաբերեալ որ եւ է գիր ուղղելի առ Տնօրէն Տէր Հ. Ս. Ալաճաճեան կ. Պոլիս Պալլադ-բազար Նաֆիէ խան վերի յարկ թիւ 16 :  
ADRESSE  
H. S. ALADJADJIAN  
Directeur du Journal Arménien POUNCEUR  
—16 Naffé-Han. Balouk-Pazar 16—  
CONSTANTINOPLE

ԱԶԳԱՅԻՆ

Պետերբուրգի անտարազանքի փոխ-վերնագրով , Յունիս 30 թուով նամակ մ'առինք առջի օրը , Հայ Մարտ ստորագրութեամբ : Այս նամակը գրուած է առ մեզ իբր ի պատասխան լրագրոյս 1774րդ թուով յիշուած նամակի մը վրայ մեր ըրած դիտողութեանց , որ դարձեալ Հայ Մարտ ստորագրութեամբ Բեդեքապուրիէն Մայիս 17 թուով գրուած էր , եւ կաթողիկոսական ընտրելեաց խնդրոյն կըրարեւելքն ամակագրէն խնդրած էինք , որ ստորագրութիւնը յայտնէ , վստահ ըլլալով թէ գաղտնի կ'մնայ մեր քովը , եթէ չուզէր ի հրատարակ հանուիլ . զայս խնդրած էինք , որպէս զի կարելի ըլլայ հրատարակել կարեւորագոյն խնդրոյ մը վրայ գրուածն , կամ իւրացունել մեզ արուած ծանօթութիւններն եւ ըստ այնմ ընթանալ : Մեր այս խնդիրն , որոյ արդարութիւնն՝ կարծեմք՝ անուրանալի է , կատարուած չէ . այս երկրորդ նամակին ներքեւ ալ ստորագրութեան տեղ գրուած է Հայ Մարտ բառերն , եւ ըսուած է թէ «ի՛նչ վերաբերում է իմ սով լինելուս կամ ազգանունս յայտնելու , քանի որ ես հրատարակելու մըտք չեմ գրում կամ գրած , այլ ընտանեկար իմ խորհուրդներս ձեզ յայտնում , զձեզ միայն ըզգուշացունելու պարտաւորութիւն էի յանձն տուելը » , եւ . եւ . Արդ՝ դարձեալ կգիտեմք , թէ ինչպէս կարելի է որ զգուշանամք , որ մեր արդէն ունեցած տեղեկութիւններն ի բոց թաղուք , որ մեր համազումն փոխենք , քանի որ հակառակ տեղեկութիւններ տուողին վրայ բնաւ ծանօթութիւն չունինք : Նամակագրէն վերստին կպահանջեմք յանուն անկեղծ ազգասիրութեան եւ արդարատիրութեան , որ ստորագրութիւնն յայտնէ եւ լուսաւոր ու բացառապէս ծանօթութիւններ տայ , անտարազան լինելով թէ ստորագրութիւնը գաղտնի կը պահենք : — Չեմ յիշում Սրբազան Մակարի անցեալից , որ ինձ աւելի եւս սարսափ է պատճառում գրել , եղելութիւն չնշանակել , ստորագրութիւն չընել , եւ պահանջել որ ընթերցողն նոր համազումներ առնու՝ բնաւ արդարա-

սիրութեան դործ չէ . ի միջանդործել է : Միթէ արդարութիւն է՝ այսպիսի թագուն վիճակի մէջ պահանջել մենէ , որ հաւատանք ու համազումք , թէ Հայ Մարտ ստորագրողը ո՛չ ալ ոք է եթէ ոչ հայութեան բարորութեան խնդրին նախանձանդ իրներեցից մէկը , հեռի ամեն մի անձնական կուսակցական ողոսոյ , որ ազգիս մեծ թշուառութիւններ է հասցնում : Ահա զհոգութիւն մը կ'ստորագրէ Հայ Մարտի բարբոթեան ինքնին նախանձանդէն , եւ այնչափ մեծ չէ մեր խնդրած դոհողութիւնը . ստորագրութիւն եւ եղելութիւնք : Յայնժամ թերեւս մեզ հնար ըլլայ խախտիլ մեր համազումն :  
Աւելայն ժողով երէկ դարձեալ ազգայնոյ նիստ մ'ունեցաւ : Ս. Պատրիարք Հայրը դարձեալ բացակայ էր : Փոխի մը առեւտագրութեանց վաւերացմանէն ետքը , ի տեղեկագրութիւն առ վարչութիւն յղեցաւ Փախազեան էֆէնտի մէկ գիրն , որով առաջարկած էր՝ Ազգային ժողովը հազորդել վերջին ընդհանուր կալուածագրութեան ժամանակ մասնաւորաց յիւր արձանագրեալ ազգային սեպտակապութեանց ցուցակն , եւ կ'հարցունէր թէ վարչութիւնն ինչ ապահովութիւն ունի : Ժողովը բաւական յուզեցաւ՝ իւր ելեւմտական յանձնախմբին անգամներէն ֆրիստատուր էֆէնտիի հրատարականը լսելով , որ պատճառկցուցնէր առեւտագրութեանց տըպագրութեան եւ Ազգային ժողովը վերաբերեալ օրիշ ծախուց համար որոշուած գումարին չվճարուիլն , եւ մասնաւորապէս կը գանգատէր Տնտեսական խորհրդոյ անգամներէն Սեթեան Միհրան էֆէնտիի դէմ , եւ կ'այտարարէր թէ սա կանպատուէ Ազգային ժողովը եւ առ ոչինչ կը գրէ : Ըստ սրում արդէն ժողովը սոյն յանձնախմբին ընտրութեան ժամանակ խոստացած էր պէտք եղած դիւրութիւնը տալ , եւ որոշած էր որ յանձնախմբին տեղեկագրէն ինչ որ պէտք է եւ ինչ արդեւք որ կայ , ֆրիստատուր էֆէնտիի եւ իւր ընկերակցոյ յանձնարարեց , որ ըստ այնմ որոշման գրով հազորդէ իւր դէմ ելած արդեւքներն : Այս առթիւ

դարձեալ դիտողութիւններ եղան Ազգային ժողովը դումարման տեղին կարասեաց անվայելչութեան վրայ , եւ արդարեւ դիտելի է . վարչական ժողովներն , խորհուրդներն , հոգաբարձութիւնք եւ այլք բաւական վայելչութիւններ ունին , սակայն Ազգային ժողովը ընդհանուր Ազգիս ներկայացուցիչն եղող Ազգային ժողովը չունի պատշաճ խորհրդավայր մը , եւ թո՛ղ վայելչուէ կատարութիւն , այլ փոխաթիւններ իսկ կտոր կտոր եղած են , եւ երբ խօսք ըլլայ , կուզեն ոմանք որ երեսօխտանք իրենց անձնականէն ընեն ի՛նչ որ պէտք է , մինչդեռ այս պահանջումն չըլլար վարչական անձանց համար , եւ արդարութիւն չէ որ ըլլայ եւ ո՛չ միայն համար , քանի որ Ազգային սրնուակ կայ , եւ հոգ թափած ստակը այսպիսի ծախուց համար ալ յատկացեալ է : Ուր պիտի երթայ արդեօք Ազգային ժողովը դէմ ազգային ժողովէն ընտրեալ անձանց կողմանէ տեսնուած այս անտանելի արհամարհանաց վախճանը :  
Ժողովը ապա անցաւ վաւերացունել երեսօխտանական նոր ընտրութիւններն : Նորընտիր երեսօխտանք են , Պէյօղլուէն՝ Մանուկեան Սենքերիմ , Ալանեան Մանուկ եւ Մագպուլեան Համբարձում էֆէնտիներն . խասգիւղէն՝ Թիւլպէնտեան Նիկողոս էֆէնտի : Ուրիշ ընտրութիւններ ալ կատարուեցան . մայր դիւանի համար , Յ. Գուրգէն էֆէնտի երկրորդ , եւ Թընկըրեան էֆէնտի երրորդ ատենագիր անուանեցան , եւ նախաքննիչ դիւաններէն՝ ձեռնհասութեան ու խմբագրութեան դիւանք ամբողջացան՝ հրատարակելու տեղ այլք ընտրուելով : Եւ այսպիսի , ըստ օրակարգին : Ս. Պատրիարք Հօր շացման ձառին պատասխանին խնդրոյն պիտի մտնէր ժողովը , սակայն հարկագրեցաւ առաջիկայ նստին թողուլ՝ առեւտագրութեան էֆէնտիին իմանալով , որ ատենապետաց ժողովը մեծագոյն մասն չունենալուն պատճառաւ՝ խըմբագրեալ պատասխանը ժողովին ներկայացունել կարելի չէ եւ սպասել հարկ կ'ըլլայ : Ասոր յաջորդեց վարչութեան մէկ գրոյն ընթերցումն , յորմէ տեղեկացաւ

ազգային ժողովը թէ ազգային վարչութիւնը կ'ուզէ մինչեւ վեց ամիս յետաձգել առ ինքն ուղղեալ հարցմանց կամ խնդրոց պատասխաններն : Այս խնդրքն՝ Շատախու արկածելոց վիճակն . Մնակեանի ժառանգութեան դործը . Բերայի նպաստի բաշխման հաշիւն . վստայ կողմերէն Հայոց գաղթականութեան զրոյցն , կատակոց Հոգաբարձութեան կազմութիւնը , Տնտեսական խորհրդոյ մէկ պաշտօնական յայտարարութեամբ կեդրոնական վարժարանի բացման եւ ընծայարանի ընդարձակման յետաձգումն : վարչութեան սոյն գիրը զարմանօք լսեցին երեսօխտանք , եւ որոշուեցաւ առաջիկայ նստին օրակարգն անցունել , պէտք եղածը խորհելու եւ տնօրինելու համար . սակայն , որովհետեւ արդէն օրակարգն էր Բերայի նպաստի բաշխման խնդիրն , փոխառութեան կենթարկեցաւ , եւ տեսնուելով որ վարչութեան ատենապետ Մագպուլեան Սիմոն պէյ թէպէտ ի սկզբան կ'այտարարէր թէ վարչութիւնը գոհացուցիչ գտած է իւր ստացած ծանօթութիւնները , եւ զանոնք չկրնար ժողովին հաղորդել , բայց ժողովէն ընտրեալ մասնախումբ մը կրնայ Պատրիարքարանէն տեղեկանալ , եւ տեսնուելով որ ատենապետ պէյն ի վերջոյ կ'այտարարէր թէ երբ ազգային ժողովը վճռէ այդ հաշուոյ խնդրոյն ազգային ըլլալը , յայտնում վարչութիւնն ալ հաշիւն առնելու համար պէտք եղած ձեռնարկութիւնը կընէ , ժողովը քուէարկեց թէ ազգային է խնդիրն , եւ յանձնարարեց որ վարչութիւնը ըստ իւր խոստման վարուի այսուհետեւ : Նշանակութեան արժանի է նաև վարչութեան կողմանէ արուած մէկ խոստումն , որ է կեդրոնական սնտուկին հաշուէկիւն մէկ ամիսէն ներկայացունել ազգային ժողովին , հանդերձ մանրամասն ծանօթութեամբք եւ առաջարկութեամբք : Ատենը փակուեցաւ , 15 օրէն նիստ ընելու որոշմամբ : Պէտք չէ կարծել , թէ ժողովը այս արդիւնքն ունեցաւ դիւրութեամբ . գրեթէ ամեն կողմանէ ցաւ ու վիշտ յայտնուեցաւ : վարչութեան յետաձգմանց , տարտամ պատասխաններուն եւ յաճախ քաղաքական նկատմունք



մինչև իսկ հաշուական պարզ խնդրոց համար ներմուծուելուն վրայ : Արդեօք ե՞րբ ներգանա- կութիւն պիտի գոյանայ վար- չութեան և ազգային ժողովոյ մէջ, և այս վնասակար ու գոյ- թակեղելի ընթացից վերջ պիտի տրուի :

Հանգանակութիւն կըլլայ այս օրե- լըս ի նպատակ Մասնի, Հայրենի և Լոյս լրագրաց : Մասնի ի նպատակ հանգանակութեան գործն Արժ. Տ. Մկրտեան աւագ քահանայն սկսելով և իրրեւ 17 լիրա հա-ւաքելով, յանձնած է Արժ. Տ. Տաճատ վարդապետին : Այս հան- գանակութեան ձեռնարկեալ է, Մասնի երկամսեայ գաղարմանն պատճառաւ վնասուելուն հա- մար : իսկ Հայրենի և Լոյս լրագրաց համար յատկապէս յանձնարա- րադիր տուած է Ս. Պատրիարք Հայրը : Հայրենի համար հանգա- նակութիւնը պիտի սկսի Արժ. Տ. Վահան վարդապետ : Լոյսի խըմ- բագիրն անձամբ կ'ըլլայ ի նպատակ իւր հանգանակութեան գործը : Ս. Պատրիարք Հայրն քաջալե- ղութեան արժանի դատեր է այս երկու լրագրերն : Արդիւնաւո- ղութիւն կ'մնայ իրեք երեքին հա- մար ալ, և որովհետեւ մեր լը- րագրութիւնը քաջալեղութեան արժանի հաստատութիւն մը հա- մարել կարելի չէ, չեմք համար- ձակիր ուրիշ միջոցի գիծել, այլ ինչպէս վերջնութեան թերթով մա- տուցած էինք, այս առթիւ ալ խնդիր կը մատուցանեմք որ, փոփոխութեան քաջալեղութեան հաշիւ ունեցողներն բարեհաճին վճարել այսպէս : Այսպէս ա- պաքէն մեծ օգնութիւն ըրած կըլլան, փոփոխութեան պատուաւոր և ուղղութեան շարունակութեան հա- մար : վճարմանց օր մ'իսկ յապա- ղու մն անհանգուրժելի վիճակի մէջ կ'ընէ զմեզ . . .

Երազման-Գարահիսարի հրդե- հէն ետքը՝ որ բաւական վնասա- բեր եղած է մերայնոց համար, Հանքնի մէջ ալ մեծ հրդեհ մը պատահելով, ըստ հեռագրի ա- ռաջնորդարանին՝ քաղաքին մեծ մասն այրեացաւ եղեր, և վը- նասուց մեծ մասն՝ մերայնոց բա- ժին ինկեր է : Այսպէս արկած արկածի յաջորդելով, առաւել եւս կը առնացունեն մերայնոց վի- ճակն, և Պատրիարքարանի վրայ մեծ պարտաւարութիւն կ'ընան- րանայ՝ կայսերական կառավա- րութեան գթութիւնն հայցելէն զատ, իւր կողմանէ ալ օգնու- թեան միջոցներ հայթայթել : կըս- պասենք իմանալ, թէ կ'ըլլի իրոյ Տ. Մկրտիչ կաթողիկոսն ինչպէս վարուած է :

Միջազգիցի Գուրգէնեան Հայկական կրթարանի ուսանո- ղաց միջանակարաշխութեան և ուսումնասարտ աշակերտաց վը- կայականաց բաշխման հանդէսը կկատարուի վաղը, գիւղին Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, ի

Ժամ 6-1/2 : Հարցաքննութեանց ներկայ գտնուող մեր բարե- կամներն առ հասարակ գովու- թեանը կ'ստանն սոյն վարժարա- նին յառաջագէտ ընթացից վրայ, և մասնաւորապէս կ'ընտրուեն ճիշմարիտ-անօրէն Յ. Գուրգէն էֆէնտի անձանձիր փութաջա- նութիւնը :

—Տնտեսական խորհրդէն : Ազգային Տնտեսական խորհու- ռըն՝ ինչպէս յառաջ քան զայս ի լրագրերս 27 Մայիս թուական- նաւ և 258 համարաւ պաշտօնա- կան ծանուցմամբ ի գիտութիւն հրատարակած էր Ա. շրջանակի համար Աստուր էֆէնտի Աւ- լահիբեանի և Գ. Բ. շրջանա- կի համար Մեյքոն էֆէնտի Տէօօ- մէճեանի կեդրոնական յեանեալ տրոց հաւաքիչ կարգուած ըլլա- լին, նոյնպէս և այս անգամ կը փութայ ծանուցանել թէ, Բ. Բ. շրջանակի համար (թուղարու, Գարակէօմլիւկ, Սալմաթօմլուք, Էտիքնէ գաբու, Պալատ, Էյուսպ Սուրբ Եղիա և Ս. Աստուածածին, Խաղիւղ և Գասլմբաշա) հա-ւաքիչ կարգուած է Աստուր է- ֆէնտի Գավաֆեան, և Գ. Բ. շրջանակի համար (Գուղիւնձուք, Իճատիէ, Խալիլուտար Ս. Խաչ և Ս. Կարապետ, Հայտար փաշա, Գաաք գիւղ և կղզիներ) Հրանտ էֆէնտի Գավաֆեան :

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԷ

Երբքին գործոց նախարարու- թիւնն Պօլսոյ և գաւառաց մէջ պէտք եղած գիւտաններն կազմել տուեր է, թուրքիոյ մարդահա- մարի գործողութիւնը կատարե- լու համար : կեդրոնին գիւտնը անօրէն մը, օգնական մը, և պէտք եղածին չափ քարտուղար պիտի ունենայ : Նահանգաց կեդրոննե- ղուն մէջ անօրէնը՝ 1000, գիւտա-ւոր քարտուղարն՝ 500, և ստու- րագրեալ քարտուղարք 250ական զըլլ ամսական պիտի ունենան :

—Պողոտաի կառավարութեան կողմանէ անգղիական Լինչ ընկե- ղութեան մէջ շոգենաւն դրաւ- ման ենթարկուած լինելով, Պօլ- սոյ գետապանատունը ստիպմամբ փոխարինութիւն կ'պահանջէ ըն- կերութեան համար : Բ. Գրան ի- րաւադիտաց սենեակին յանձ- նուած ըլլալով սոյն խնդիրն՝ առ- ղեկագրեր է թէ պէտք է ազատ թողուլ շոգենաւն, մինչև ցկար- գադրութիւն խնդրոյն : Նախա- րարաց ժողովն վաղը պիտի խոր- հրդեհակցի սոյն խնդրոյն վրայ :

—Մալգարայի Յոյն-Հուլիանե- կան եկեղեցին գիւտամբ կրակի արուած ըլլալով՝ մըգտարն և քանի մը անձինք, իբրեւ կառ- կածաւորք, բռնուեր հարցա- ըննուեր, և դատուելու հա- մար Էտիքնէ գրկուեր են :

—Խու մը մը Մահմետականք զրեր են առ վաղը, թէ ի մէ- ղի գիւղ վրացի քահանայից աը- ւած շուրք շատ անտեր կը ժշկէ :

և խնդրեր են որ ծանուցանէ թէ յիշեալ գիւղին մէջ նոյս ունե- ցած աղօթարանն ընդարձակելու համար ամեն կողմանէ հանգա- նակութեան ձեռնարկեալ է, և մասնակցիլ ուղղ ժողովականք կրնան յանձնել իրենց նուէրը Տուպիսի և կըսվանի պէս ան- ձանց :

—Քօրէսթոնաանու Բօլիթիք կը գրէ, թէ կ'երեւի որ կրեալի վե- րաբերեալ խնդիրք պիտի կար- գադրուին : Կ'ըսուի, թէ Բ. Գու- աը ընդունելով կրեալոց գան- ձային խնդիրներն՝ ըստ այնմ վարուելու հրահանգ զրկած է կուսակալին : և միւս կողմանէ կրեալոցի ալ իրաւախոհութեամբ վարուելու հակամէտ են : Խնդրոյն մէկն ալ կղզոյն աղ- գային ժողովոյ իրաւասութեան սահմանը ընդարձակել է, որ առ այժմ առկա մնայած է :

—Նախորդ խոխիլ խմայիլ փա- շա Լոնտոն գացեր է, և տմառը հոն պիտի անցունէ :

—Սուտանի սուտ մարզարկին դէմ՝ նոր արշաւանաց համար պատրաստութիւն կ'ունենէ անգ- ղիացի զօրաւոր Հիքս :

—Մեր թերթիկն կարգալու զիջանող անձինք հարկաւ կ'ըն- չեն, կրնէ այս առաւօտ վաղը, թէ գուշակած էինք որ յեղիպ- տոս երկրորդ ջրանցքի մը բաց- ման խնդիրն մինչև նախարարա- կան փոփոխութեան տեղի պիտի տայ, և ապա կ'յարէ : —Ահա այ- ժըմ հեռագիրք կ'հաստատեն մեր գուշակութիւնը : Անգղիոյ արտա- քին գործոց նախարարին հետ յամանեան գետապան Միւզլեքիս փաշայի ընդ երկար տեսակցու- թիւն մ'ընելն հեռագրեալ է : Կ'կարծուի թէ Եղիպտոսի վրայ յամանեան պետութեան ունեցած իրաւասութեան խնդրոյն կ'ըրա- յերի այս տեսակցութիւնը : Յու- նաստանի մէջ թաղապետական ընտրութիւնք՝ նպատաւոր են ներկայ նախարարութեանը կ'յու- սացուի որ հեղինակական կառա- վարութիւնը բարոք պիտի գոր- ժածէ վնասութեան այս ցոյցն : Գաղձայոյ զի լուրերն Եղիպտոսի մէջ մեռնողներու քիչ մը տեւ- նալը ցոյցնելուն վրայ, գիմայի լրագիրք սկսած են յուզեալ խոր- հրդեհածութիւններ հրատարակել : Կրժան է, որչափ յառաջ երթան զըսուցութեան խորհուրդներ տա- լու համար, բայց պատշաճ չէ արնպէս ցուցնել թէ հիւանդու- թիւնն անպատճառ այս կողմերն ալ պիտի գայ : նաեւ որչափ ալ յամանեան տէրութեան պէտք ըլլայ ջանքերն առնուեն, այն- չափ ալ խղճի դէմ է սնդեղ թէ մինչև ցարգ բան մը չեղու : Պօլսոյ քաղաքապետութիւնը 20 օրէ հետէ ըրաւ ինչ որ կարելի էր : Արդարեւ, ըստ սպարաբութեան մեր պաշտօնակցաց միոյն՝ պան- դըլտացու աղքատաց համար յա- տուկ տեղ մը չինելն ալ կրնայ հիւանդութեան տարածումն ար-

դելուլ մատմբ իւրք, բայց այն- պիտի տեղեաց շինութիւնը՝ տե- րութեան մտածելիք գործն է, և միայն մէկ վերատեսչութիւն մը ինքնին չկրնար ձեռնարկել : Միշտ ցաւով կ'տեսնուի՝ փողոց- ներք մուրացիկներուն կողմանէ ժողովրդեան նեղուիլն, և վն- ղայներուն խայտառակութեան կամ անտից ու հիւանդութեանց տեսարան ըլլալը : Մեք եւս կարի յայժ պէտք կ'ունենեմք՝ այս վի- ճակին համար տէրութեան կող- մանէ գարման մը մտածուելուն : Աստուած պահէ, եթէ սոս'իսի հիւանդութիւնը մեր քաղաքն ալ տարածի, տարակցս չկայ թէ նախ զո՞հ պիտի տանի փողոցի երը թշուառութեան տեսարան պար- զնղ խեղճ խու մըն . . . քանի որ նու- քա փողոցները կ'ընտանին, հար- կաւ ըստ մասին ապարդիւն պի- տի մեան քաղաքապետութեան և առողջական տեսչութեան ձեռք առած միջոցներն :

—Տէյիլ Թէէէկրաֆ կ'հրատա- ղակէ, թէ Տիմիաթի և Մանսու- ռայի մէջ մնացող եւրոպայիք բաւական դժուարութիւն կ'կրնն՝ յարմար ուտելիք գտնելու հա- մար, որովհետեւ գարմոյլինայի շրջանակին պաշտօնակալք չեն անցուներ պարէն տանողները : և թէ՛ Մանսուրայի եւրոպայիք այս լրոյն վրայ ելեր են բռնի անցիլ սահմանէն, և բուռն կ'ուէ մը ետքը հալածուեր, և երկու կող- մանէ վիրաւորուողներ եղեր են :

—Անգղիոյ արտաքին գործոց նախարար լորտ կրանվիլ շրջա- բերական մը ուղղելով դեսպա- նաց ու հիւպատոսաց, պատաւի- րեր է որ այսուհետեւ իրենց պաշտօնական գրերն շարադրուին զուտ ու մաքուր անգղիարէն լեզուաւ, և գաղղիական բառեր իբր անգղիացուներով չգործա- ծեն և անգղիական լեզուն չա-ւաղեն : Մեր Պատրիարքարանի մէկ պարսքն ալ Հոյ լեզուի ան- այլալ պահպանութիւնն ըլլա- լով, ըստ անօրինութիւն մը բրած կըլլայ, եթէ փոյթ տանի գոնէ պաշտօնական գրութեանց զուտ ու մաքուր հայերէն ըլլալուն հա- մար :

—Լիւանանու նախորդ կառա- վարիչ Բիւսթէմբաշա՝ սուլի օրը վիեննայի հանքային ջուրերն ու- ղեւորեցաւ :

—Հուշակաւոր Տէյիլ Ուսթի- տու լլահ՝ Թոյիֆ հատեր և կա- ռավարութեան կողմանէ՝ պատ- ըստանալ տունը իջեր է :

—Էրպրէս կ'ըրէ, թէ Արպա- նիոյ մէջ յուզմանք կ'արտեակ- ուի դեռ, և այս շարժում պի- տի զրկուի Ասիմ փաշայի խնդ- րած օգնութիւնը :

—Խոխիլի կ'ըրէ : Շիւսէյին փաշա ընտանեօքն Նարոլի գա- ցեր է, և կրտուի թէ նոյն ինքն խոխիլ ալ մտնես յիշեալ քա- ղաքը պիտի երթայ ընտանեօքն հանգերձ :

—Լուր կայ, թէ Գարտաղի իշխանը՝ Չիլիկէ գաւառէն յա- ռաջ մայրաքաղաքս պիտի գայ, և այսպէս պիտի գիւրանայ առ-



կան մնացած խնդրոց կարգադրութիւնը :

—Պ. Գորբին լեռն հանուց տաղանքները ձերբակալելու համար ազգու հրամաններ զայնքան են : Պարէն յատկապէս քանի մը հարցաքննիչը զրկուած են թէ փէ դիւզի Չորպանի հի.քոլան և մերձակայ գիւղի մը բնակիչներէն մէկ քանին քննելու համար :

—Մէքքէի մէջ այս առաջին անգամ տպարան բացուել է, կը բռնական գրքեր տպագրելու համար :

—Կառավարութեան բարձր պաշտօնատանը դուր ևն այսօր, խորդայն ճէրփփի ուխտագնացութեան հանդիսին համար, որ բառ սովորութեան Բամազանի 15 ին կիտարուի, և երէկ էր օրը, բայց ուրախ ըլլալուն պատճառաւ, այս առաջ ճգուեցաւ : Այս առթիւ, այսօր ի Պօլիս կանցի Օգոս. Մուլթանը :

—Յունաց Պատրիարքարանը գեռ կը բռնակէ կրօնական և դատական արտօնութեանց խնդիրն : Այս օրերս Բ. Դրան կանաւաննէ յիշատակագիր մ'ալ որ ըստ կործնաց Նեւեջի քաղաքին հրովարտուող կապացուցանէ Պատրիարքարանի արտօնութիւնները :

—Օրոտու Մուլթանին որդւոյ ուսուցիչներէն և թիկնապահներէն գաղղիացի Պ. Կարաէյ և րեքարթի օրը թընկերեսնի հետ նաւակով մը Մեռ ծովու ներուցին կողմերը շրջագայած ժամանակ, նայն առաջ ուժգին փոթորիկն հանդիպելով նաւակն փայտի մը զարնուելով շարդալիտոր եղեր, Պ. Կարաէյ (25 տարեկան) ընկզմեր անյայտ եղեր, և միայն թընկերեսն էֆէնաի ազատեր է ինքզինքը փայտի մը վրայ նեւանելով :

—Ի Գալէնտէր անցեալ Սթէյ-կէճէսի օրը արջ մը խաղցած ատեն սանձը վրայուցած և անասաբ փոխած ըլլալով, այս օրերս տեսնուած է նայն կողմերը բազում այգիներու և սրտերու

Պատ տաղէն դատ, երկու օր յառաջ անկէջ անցնող կաթնագուճաւի մը վրայ արտուի մեծութեանը քար մը նետեր է, սակայն չէ հանդիպել մարդուն :

—Առաջկողմ ձեռքէն ազատուած Պ. Գորբի նոյա ներքին կարգադրութեանց վրայ հետաքրքրական ծանօթութիւններ առած է : Երբ տեղէ մը դրամ առնուին, 100ին 10ը աւելի կուտան մեծաւորին, և մնացեալը հաւասար բաժին կուտանան : Երբ իրենց մէջէն մէկը գիւղ մը կամ տեղ մը գրկուի պաշտօնով մը, վարձը կիսատացուի և համարակալն կարճանագրէ : Չորրորդ գետերէն ու ձորերէն շարկելով անցունողն որոշելու համար վիճակ ձգելը են, և վիճակն որոշուելը է, խոտացելը են 10 մէճիտ վարձը տալ առնուելիք փրկանքէն : վերջապէս բաւական կանոնաւոր խաւք մ'է եղեր, և Պօլէն 5—6 ժամ հեռի տեղեր կ'գանուի :

—Անգղիոյ պահպանողականաց կողմանէ, հանգուցեալ Լորա Պիքոնֆիլիսի յիշատակին համար տրուած կոչումը մը մէջ, Օսմանեան ծովապետ Անգղիացի Հօպարթ փաշա ալ ատենախօսելով Պիքոնֆիլիսի քաղաքականութիւնը գովեր, և ներկայ նախարարութեան քաղաքականութեան դէմ խօսելէն ետքը ըսեր է. — «Օսմանեան տերութիւնը կապառազինէ 600 հազար զօրք, որոց քաջութիւնն հանրածանօթ է : Անգղիա երբ մտերմ գաշտակցաց պէտք ունենայ պիտի ճանչնայ Օսմանեան զօրաց արժանիքն : Այդ Օսմանեան նաւատորմին վրայ խօսք բանալով գովեր է թէ նաւատորմին որ ատտիճան կարեւոր լինելը պիտի հասկնայ, երբ անգղիական տորմիկն հետ միանալով ի պատեք թաղմ էրէ : Հօպարթ փաշա Օրոտու Մուլթանին ալ գիշերուցիերէկ երկրին համար աշխատելն հաշակեր է, և ներկայ եղողներն սաք ելլելով կեցցէ Մուլթան,

կեցցէ Օսմանեան պետութիւնն ազազակեր են :

—Չեմք կարծեր, որ փունջի ընթերցողը դժգոհին Երկաթուղի մէջ մնողձայուղի հիւանդութեան գոհերուն թուոյն վրայ ծանօթութիւն չառնուելով : Չանց կ'ընենք իրերու անօգուտ ինչ, բաւական համարելով մերթ ծանուցանել թէ ոչ միայն մեր այլ և ամեն կառավարութիւնը զգուշութեան ամենախիստ միջոցներ ի գործ կը դնեն՝ հիւանդութեան տարածման առաջն առնելու համար, և երկաթուղիային իշխանութիւնն մտախորհապէս կ'ընեն խեղդել զայն : Գրեթէ բոլոր լրագիրք այս առթիւ երկար յօդուածներ կ'հրատարակեն մաքրութեան անհրաժեշտ կարեւորութեան, և ուտելիքի ու խմելիքի կողմանէ պէտք եղած զգուշութեան համար : Մեր փունջն անգաղարքարոջած է և կ'ընարգէ այսպիսի առողջապահական կարեւոր գիտելիքներ, և զանոնք յիշեցունելէ զոտ պարտք չունի այժմ : Տարակոյս չկայ, թէ միշտ բայց առաւել այսպիսի դժեղակ հիւանդութեանց ժամանակ նստելու և պառկելու տեղերու մաքրութեան մեծ խնամ տանել պէտք է, խոնաւ, խաւար ու անձուկ տեղեր բազմութեամբ բնակելու, ննջելու չէ, ողջախօս օրբարեխօսն կեանք վարելու է, և ոչ սակաւ անհրաժեշտ է սրտի ու մտաց անդորութիւնն :

—Անգղիոյ գործաւորք դարձեալ յուզեալ են : Ամառս 7ին, մեծ ժողով մը դուրսարելով ուրոշեր են որ իրենց վարձուց վրայ 6 բէնա տւելնայ, և գործարանապետք ետ կենան շահան բէնա զեղջելու խորհուրդէն : Քանի մը գործարաններ ալ խուժելով նախատեր են գործարանապետներն, և մէկ քանին ալ գանակոծեր են որով ստիկանութիւնը ստիպուեր է միջամտել : մէկ քանին բանտարկուեր են, բայց արձակուեր են, որովհետեւ ստիկանութիւնը ամբոխին շարժուին :

քէն վախցեր է : Կասկած կայ, թէ նոր խառնութիւնը պիտի ծագին : գործարանապետք մերժեր են գործաւորաց առաջարկութիւնը, և նորա պատասխաներ են թէ պիտի շարունակեն գիւնագրել, մինչեւ որ արգարութիւնն ի գործ դրուի :

—Պրիւսէի մէկ թատրոնին մէջ հետեւեալ զարմանալի դէպքը տեղի ունեցեր է : Ինպատո գեթասանի մը ներկայացում պիտի արուէր : ներկայացման ժամանակ միայն երեք մարդիկ տեսնուեցան թատրոնին մէջ, որոց երկուքը ազքասիկ կանայք և միւրը չքաւոր այր մ'էր : դերասանապետն երբ կտեսնէ այս վիճակն ընկերին դժբաղդութեան տալով, վարագոյրը կրանայ և կըսէ «Տիկնայք և Պարսն, որովհետեւ ծախքը բազմապատիկ աւելի է ձեր ներկայութեամբն եղած հասցիքէն, ուստի մեր ընկերն ետ կ'կենայ իրեն ըլլալիք նպատակէն », և երեքէն առնուած գրամները ետ կուտայ :

—Չեմքքէի մէջ լուսնի խաւարումն տեսնելու համար գիտարանը պիտի երթար կնոջն հետ : ժամանակն կանցնէր կինը զարդարանաց գործն երկարելուն համար : այլը երբ շուտ ըրէ, ժամանակը կանցնի, կըսէ. — «Վիսա չունի, կապտասխանէ կինը, դիտարանին վերատեսուէն բարեկամ է. դարձեալ շինել կուտայ, և մեք կտեսնենք » :

Մարդ մը բարեկամաց մէկուն կըսէ խնդիր մը ունիմ, բայց չպիտի մերժէք : բարեկամը կապտասխանէ թէ ես ալ ձեզ խնդիր մ'ունիմ, պիտի ընդունիք. — Ինչ է. — Պիտի աղաչեմ, որ ետ կենաք ձեր ընկերք խնդրէն, որովհետեւ չպիտի կրնամ ընդունիլ ձեր խնդիրն. — Ինչո՞ւ կ'մերժէք, դեռ խնդրոյս ինչ ըլլալը չհասկըցած. — Որովհետեւ եթէ ձեր խնդրելիքն ինծի համար օգտակար ըլլայ, չէ թէ խնդիր կրնէք այլ կ'հրամայէք կամ կաւետէք :

Ի ԲԱՆՏԻ (Շ-ր)

Մէկ քանի վայրկեանէ հետէ ձայնը դադարած էր, և երկու օրերուք յաիշտակուած գեռականը կը դնէին : Բայց դուրսէն ըսուած ոտնաձայնի մը պատճառաւ աճապարանօք հեռացան պատու հանին քովէն :

Այս միջոցին, Ռօտօլֆ պողով և ուրիշ բաներով լցուած սակաւ մը բռնած ներս մտնելով սեղանին վրայ դրաւ :

—Ահա տակի, ձեզ բաւ ուտանք, ըսաւ օրիորդ ալ Միւրովիտալ Մօնտֆօրտ Մարքիզը կը դրկէ նաւեր, նարինջներ են, զոր ընտանիքն Բրօքմանէն գրկած են :

—Ո՛հ, սրբալի բարեօրեալ է, շատ չնորհակալ եմ իրեն, ըսաւ Պրանչ, և ինչ անու շահօտ են այս նարինջները : Ինձ երիտասարդ տարազիր եղած է այն երկրէն ուր կանին այս գեղեցիկ պտուղները, ուր այս անուշահամութիւնք օգուց մէջ կը տարուեր ին թեթեւ զեփուաներու թեւերով վըն տարազիր եղած է այդպիսի երկրէ՛ այս սխրագիծ որմնոց մէջ փակուելու համար, ուր կանին փոխան պողոց և անուշահամութեանց՝ տխրութիւն և տագուտի :

Յետոյ բանապահին գառնալով յարեց. —Որքան Բրօքմանէն է . . . սրբալի ժամանակէ հետէ մեկնած է անտի . . . Նանթի մէջ ինչ կընէր . . . քանի տարեկան է . . . վոյեյլաւէ մ'է :

—Ո՛հ, սրբալի իմ Ռօտօլֆ, շանացէք անդեկանալ Մօնթֆօրտ Մարքիզի վիճակին և ինչ ըլլալիքն ըսէք ինձ . . . բայց մինչ յայնքամ կը խոտանաք ինձ իրեն մատուցանել իմ չնորհակալիքս :

—Կը խոտանամ : —Քանի բարեօրեալ էք : —Ո՛հ, բարեօրեալ չեմ, բայց այսօրինակ հաճոյից վարժուած եմ :

—Տես, ինչ կըսէք, օրիորդ, միթէ ես գիտեմ՞ այդ բաները :

—Բայց դուք բաւ կը ճանաչէք զիս :

—Ես բանտարկեալներն իրենց թուանջաններով կ'իմանամ. օրինակի համար գիտեմ թէ 2 թիւը հանգիստէն և քունէն երթալով կուրի. թէ 3 թիւին մայրը ամեն օր կուգայ արտատուել բանտին դրան առջեւ :

—Ո՛հ, սիրելի իմ Ռօտօլֆ, շանացէք անդեկանալ Մօնթֆօրտ Մարքիզի վիճակին և ինչ ըլլալիքն ըսէք ինձ . . . բայց մինչ յայնքամ կը խոտանաք ինձ իրեն մատուցանել իմ չնորհակալիքս :

—Կը խոտանամ : —Քանի բարեօրեալ էք : —Ո՛հ, բարեօրեալ չեմ, բայց այսօրինակ հաճոյից վարժուած եմ :

Եմ. իւրաքանչիւր բանտարկեալ, իւր միայնութեան և անգործութեան մէջ մօտն ունեցող ամեն ոչինչ բանին սէր կուտայ. մին՝ ձանձ մը կը բռնէ և անոր հետ կը զօրօնու. միւսն՝ իւր պատուհանին վրայ դեղձ կը մշակէ. ուրիշ մը մնոցսի մը հետ կընտանենայ. ուստի ես ալ, օրիորդ, կըրնամ ձեզ ներել ձեր Մարգիզը. բայց պէտք չէ որ խնդիրը փոխուի վանդի բանտի հաճոյից սահմանը անցած ատեն, այժմէն կիմացնեմ որ ի կարգ կը բերեմ ամեն բան :

—Ո՛հ, կերպուած որ ժամանակ անցնելու համար նորա վրայ կը խորհիմ. ժամանակը այս բանտին մէջ շատ խիստ ընթացք մը ունի :

—Ո՛հ, կերպուած որ ժամանակ անցնելու համար նորա վրայ կը խորհիմ. ժամանակը այս բանտին մէջ շատ խիստ ընթացք մը ունի : Ռօտօլֆ դուրս ելաւ : —Օն, ըսաւ Պրանչ, ալ այդ բա-



